

Մ Ե Ր Կ Ի Կ (1)



Զօհրապի Յիշատակին

Աւելի իր յաղթ հասակը քան իր ընկուզի կողովը կը պարտացնէր Մերկիկ, Մէօհրատարի գրօսավայրին մէջ: Մըսեղէն աշտարակ մը այդ Մերկիկը. ի տես իր տիտանեան հասակին պիտի փորձուէիք կարծել թէ՛ այս ընկուզավաճառն իր բոլոր կեանքին մէջ պէտք չէր ունեցած ընկուզենիի մը շուլլուելու. պիտի բաւէր որ իր ձեռքն երկնցնէր անոր որպէս զի քաղէր պտուղը. այդ հսկան, Գողիա՛ թը:

Հայ կտրիճին աւանդական տիպարը չէր Մերկիկ, անփոփոխապէս հրաշուի,

(1) Տիգրան կամսարականի այս նորավէպը գրուած է 1893ին եւ կը ցուցնէ այն ոգին որով Արփիարեան, Բաշայեան, Հրանտ եւ ինքը՝ նոր խմորուիլ սկսող հայ «յեզափոխական» շարժման բնագրական համակրութիւն մը կը յայտնէին գրական էջերու մէջ: Ասիկա երեւցած է Զօհրապ – Ասատուրի Մասիսին 1893ի թիւերէն մէկուն մէջ, բայց բնականաբար գրաքննութեանն նդակտոր եղած ձեւով մը: Մեր տաղանդաւոր բարեկամը փափաքեցաւ որ լիակատար բնագիրը երեւայ Անահիտի մէջ, եւ մենք հանոյճով գոհացում կուտանք իր փափաքին, յուսալով որ այս հրատարակումը, – որ մեր բնթերթողներուն ստուար մեծամասնութեան համար անտիպ էջի մը երեւման համարժէք պիտի ըլլայ, – պիտի մղէ մեր երէց բնկերը շատունց ի վեր գրեթէ ամբողջապէս լքուած իր գրական գեղեցիկ գործունէութիւնը վերսկսելու:

Թ. Խ.

Թխահեր ու թանձրայօն: Առնական քիչ մը խստագիծ դէմք մը ունէր, որուն վրայ կծծութեամբ բուսած իր պիրկ ու նրբաթել պեխերը ազնուականութեան նշոյլ մը դրած էին անակնկալօրէն: Մազերը խարտիչուկ, իր ընկոյզներուն ջրովը ներկուած կարծես, գիսակոյտ մը կը ձեւացնէին գլխուն յետսակողմը. անոր վրայ, արհամարհոտ մատներով, սեւ ու սպիտակ ֆէս մը անցուցեր էր, ետեւէն քիչ մը կոտրած՝ անկէ կախուած անհուն ծոպին ծանրութեան տակ: Յօնքերը աղեղնաձեւ՝ խրոխտ գեղեցկութեամբ մը կը շքաւորէին իր աչքերը, ուր զօրաւոր այլ դանդաղկոտ անասնոյ մը անխոսով ու վեհ նայուածքը կը հանգչէր:

Բնական զգուանքովը՝ որ յատուկ է զօրաւոր մարդուն՝ ամեն դժուր ու կեղտոտ բանի համար, Մերկիկ կաթնաթոյր շապիկ մը կը կրէր միշտ, պերճ ծալքերով, որ թափանցիկ հիւսուածքին տակ, ի տես կը դնէր անոր ցորենամորթ դընդերներուն խաղերը: Իր լայնչի տարատը կ'իջնէր չվերջացող սրունգներուն ու սեւ կիսակօշիկներուն վրայ, որոնք աւելի պայծառ ցոյց կուտային իր ճերմակ գուլպաներուն անբիծ մաքրութիւնը:

Մերկիկ կը պարտկէր միշտ հասարակաց այս պարտկչին մէջ, սեղաններու շրջանն ընելով յամրաքայլ: Ու հեռուէն՝ տեսողութեան պատրանքով մը, ձեզի պիտի թուէր թէ՛ ճերմակ պատասառով մը քողարկուած իր լանջքը,

բարձրացած այդ նստուկ բազմութեան վրայ՝ մարմարիոնէ կիսանդրի մըն էր, որ յանկարծապէս կեանք առած՝ կը յածէր ու կը ծածանէր անդադրում այս ու այն կողմ յարաշարժ:

Ու մարմնական կորովի այս պերճանքը, ուժի այս բոլոր զեղխութիւնը անոր համար որ իր վեր սոթած արոյրէ դաստակէն մինինիկ սին ու անհեթեթ կողով մը կախէր, - իր ընկոյզի կողովը. աւելի ծիծաղելի պատկեր չեմ տեսած երբեք. պիտի յիշէիք հաւկիթը՝ զոր Բարեկենդանին, չորս հուժկու բեռնակիրներ կը կրեն ձողակներէ կախած, ու կը պտըտցնեն զայն փողոցէ փողոց, հեւ ի հեւ:

Այս ֆէվիզիին, դուք ընկուզավաճառ անուանեցէք զինքը, իմ հետաքրքրութիւնս շարժեց, երեւոյթի մը պէս: Ու ան հիացում նաեւ կ'ազդէր ինծի տակաւ, զի Մերկիկ իր նկարագրովն ալ մեծանձն կ'երեւար, ինչպէս հզոր էր Փիզիքապէս:

Վեհ հանդարտութիւն մը կը պահէր միշտ իր շարժումներուն մէջ, առ ու ծախի տենչ ու տենդ չէր մատներ բընաւ, օր մը ան չպտուց մեզի իր ընկոյզներուն թարմութիւնը, ինչպէս ընկուզավաճառ լակոտները իրենց հոգէտ ճիշերով: Երբեմնապէս՝ թաւ ու խորունկ ձայնով, «Բարիտաֆիա» մը կ'արձակէր ան, դէմքին մէկ գիծն իսկ չխախտելով, իբր թէ ուրիշ մէկը ձայնած ըլլար, ինչպէս խօսող խամաճիկի մը ետեւէն: Եւ սակայն՝ իր արտաբերած այդ միակ բառը կը զօրէր ախրապետելու գրօսավայրին խժուկին, բամբին նման որ վանկի մը մէջ կը խեղդէ մերթ խմբերգի մը ամբողջ արձազանգը:

Ես յաճախ ընկոյզ կ'առնէի իրմէ եւ կը ստիպէի բարեկամներս որ տանեն

իրենք ալ: Մեր մէկ նշանին վրայ՝ Մերկիկ կուզար, կը մօտենար մեզի, հանդարտաքայլ, առանց շտապի. եթէ մանրուք չունենայինք՝ ապահով էինք որ կ'աւրէր: Ու երբեք օր մը մենէ մէկուն մտքէն չանցաւ համբել ընկոյզները զոր կը գնէինք մենք իրմէ:

Մերկիկ մենէ ստացած տասնոցներուն համար շնորհակալ չէր ըլլար, ու ես կը սիրէի իր այս հպարտութիւնը:

Իմ հիացումս սակայն այս կարիճին համար ցաւագին զգացումի մը փոխուցաւ տակաւ: Նախնական մարդու, որուն համար ուժն էր ամեն բան, առհաւուրեան բնա՞զդ մըն էր իմ մէջս, չեմ գիտեր, որ անհանդուրժելի կ'ընէր ինծի այս հսկային ստոր ու ճղճիմ վաստակը: Ինծի համար սրտմտեցուցիչ կը զանոնար տեսնել որ, այդ վիթխարի մարդը, մեր վրայ իր ունեցած կորովին անխնայ գերազանցութեանը մէջ՝ մեր մանրութեանն ձեռք երկնցնէր ու անոնց կարօտ ըլլար ապրելու համար: Այլեւս հեզնութիւն մը կը թուէր ինծի իր բարձրարեւճ հասակը, զոր գատապարտւած էր կրելու կեանքն ի բուն, գուցէ նեղուելով ու խպնելով ալ անկէ: Ծագրի գրոշմն էր այն, զոր անագորոյն բնութիւնը ի սպաս դարկեր էր այս մարդուն, հարաճճի աղու մը պէս որ ծիծաղաշարժ պիտակ մը կը կպցնէ անցորդի մը կրօնակին ու կը քրքջայ ետեւէն:

Ու այսուհետեւ երբ մանրուք մը սահեցնեմ իր ձեռքին մէջ՝ սրաի ճմլում մը պիտի ունենամ, իբր թէ ողորմութիւն տայի յաղթանդամ ըմբիշի մը որ սասպարէզէ զրկուած ու անդորձ՝ չբաւորութեան մէջ ինկած ըլլար:

Անցեալ աշնան իրիկուն մը, երբ
ընկուզենին թօթված էր արդէն իր վեր-
ջին տերեւը, մեր գիւղին շուկայէն
կ'անցնէի բարեկամի մը հետ: Ան գիտէր
իմ վառ շահագրգռութիւնս Մերկիկին
մասին. յանկարծ կանգ առաւ, ու ըսաւ
ինձի թեւս ճմրելով.

— Քուկինդ նայէ՛:

Նայեցայ իր ցոյց տուած կողմը,
գինետունէ մը ներս, գինետան խորը:

Իմ մարդս էր, Մերկիկը:

Ան բազմեր էր հոն, գինետան նա-
խագահի մը մեծվայելչութեամբ,
բարձրիկիկ նստարանի մը վրայ: Իր գի-
մացն ունէր զոյգ մը արբանեակներ ո-
րոնք իր հրաւիրեալներն էին անշուշտ,
«ընտրեալ»ները:

Մերկիկ իր յարգարանքը փոխած
էր այս անգամ. զգեստաւորուած, կար-
ծես ծէս մը կատարելու համար: Շագա-
նակագոյն ապայէ հագուստ մը կը կը-
րէր, որ աւելի լիազիծ ցոյց կուտար իր
մարմնեղ գեղեցկութիւնը, ու ոսկեթել
կրկնոց մը նետած էր ան իր ուսերուն
վրայ, անփոյթ վայելչութեամբ մը.
Ֆէսը միայն նոյնը պահեր էր, պզտիկ,
աննշան, — արհամարհուած բանի մը
պէս:

Չարմացկոտ՝ բարեկամս ու ես
սաստկագին հետաքրքրութեամբ կը գի-
տէինք զինք: Մեր քովերը քանի մը ձրկ-
նավաճառներ եկեր իրենց ապուշ գլուխ-
ները շարեր էին գինետան ցուցափեղկին
առջեւ, հիացական ու ըղձական ակ-
նարկներ նետելով ներս, դէպ ի Մեր-
կիկը, զի մոլութեանց սխրագործու-
թիւններն ալ յաղթանակներ էին այս
մարդոց համար:

Մերկիկ սկսած էր խմել. կը խմէր
հանդարտօրէն, անզրգուութեամբ, ու
կը հրամցնէր նաեւ իր փոքրաւորներուն
որոնք արխարար կ'ընկերակցէին իրեն,

իր կենացը պարպելով բաժակնին, ու
առատօրէն պատիւ ալ ընելով իրենց առ-
ջեւ ափսէի մը մէջ խնամով շարուած
ճոխ ու պէսպիսակ խորաիկներուն, պար-
ծա'նքը պոլսական համեմատենչ որկրա-
մոլութեան:

Յորեկուան միահեծան լութենէն
յետոյ՝ գինետան մէջ «ոգելից» շարժում
մը ու զուարթ խժոռոց մը կար հիմա-
օրն ի բուն դարակներուն մէջ անշարժա-
ցած բիւրեղէ սպասները յանկարծապէս
վար առնուած՝ կը ցատքոտէին, կը ճրո-
ճոյցին, ախոռի մը մէջ փակուած ձիւ-
րու նման որ մտրակի հարուածով մը
խրաշած՝ կ'աքացեն ու կը վրնջեն խու-
ճապով: Սրահին մէկ անկիւնը, դնչու մը
զոր փնտուեր, գտեր ու խսկոյն բերեր
էին հոտ, իր սնկային սրինգին մեղե-
գին կ'ոլորէր ու բզէզ մը իր թմբուկին
թփոռոցովը կէտեր դնել կը թուէր ա-
նոր տխրանոյշ հատուածներուն: Մեր-
կիկ տիրական շեշտով մը իր նախասի-
րած եղանակները կը հրամայէր գըն-
չուին. ու աւելի ցած՝ պատուէրներ կու-
տար գինետան մանչուն: Ու ճշմարիտ
մրցում մը բացուած էր ասոնց միջեւ,
սրահին ոգեւորութիւնը գերարժարծե-
լու, ցմոլեզնութիւն:

— Էյլիյէ, տայը, էյլիյէ...

Կը կոնձէին շարունակ, իրենց թե-
ւերովը սրբելով պեխերնին ու շրթունք-
նին: Մերկիկ ալ սկսած էր վերին նիւ-
թերու վրայ բարբառիլ ու ճառատել,
հնչ որ կը պատահի իր նմաններուն երբ
իրենց բանականութիւնը նուազի:
«Մարդ ըսածդ ...» ու ամբողջ իմաս-
տասիրութիւն մըն էր զոր գինետան այս
տրիբունը կը պարզէր հոն, ատենարան-
ներու ջրի բաժակին տեղ՝ օղիինը ունե-
նալով իր առջեւ: Ելաւ յանկարծ ոտքի,
բացայայտելու համար իր ինքնագրոջմ
բմբռնումը մարդկային կեանքի մասին,

ու վրաւ նոյնհետայն, ու իր իմացումն ալ միասին, իր ոտքերուն վրայ, որ ալքոյն թուլցած ըլլալու էին քիչ մը:

Իր բարեկամներուն մտերմութեան մէջ, Մերկիկի դիւրահաղորդ կը դառնար տակաւ, ճամարտակ ալ գուցէ, բայց միշտ մեծոզի:

— Իս նայէ, աղապաս մեռաւ նէ՛ էս ծառքովս ճաղը տրի. ծառքովս էս վըրան խոյ նետեցի...

— Էյլիյէ տայը, էյլիյէ...

Օղին կը հոսէր միշտ, ու գնչուն վիւթիւօզի իր կարեւորագ ու գերասուր թռիչները կ'արձակէր, յափշտակելով, վերացնելով, խենթեցնելով «Բագոս»ի այս «երկրպագու»ները որոնք ահա Աստուած կը հռչակէին զայն, ու «Ալլա՛հ» կը գոչէին, իրենց հրգեհուած կուրծքերուն ամենախոր խաւերէն:

— Էյլիյէ...

Մերկիկի ա՛լ հիմա բոց կը ժայթքէր կարծես, իր դայրարորբոք կենսականութեան բոլոր ծակոտիքներէն:

Իր աչքերուն մէջ խուսափուկ նըւաղումէ մը յետոյ ուժգնագոր ակնարկի մը փայլակը կը սուրար մէկանց, փարոսի մը դարձդարձիկ հայելիին պէս որ վայրկենական խաւարումէ մը վերջ՝ լուսեղէն խուրձ մը կը ժայթքէ: Բերանը կիսարաց, կարծես յիշոցներու տարափ մը տեղացնելու համար. ակոսները ցրցուած, սպառնական. դէմքը քրտնափայլ, ապիկուած կարծես, խկ կուրծքը բաճկոնակէն դուրս յորդած, շնչելով, ծխալով, կաթսայի մը նման որ օդիով եռացած ըլլար: Կը խըմէր, կը ճնկէր, ու ամէն անգամ որ գաւաթը պարպէր՝ մոնչիւն մը կ'արձակէր որ յափրացող հեշտանքի մը հեւքն էր կարծես: Կը հայհոյէր գնչուին, կը հայհոյէր մանչուն, որոնք ի փոխարէն

կը ժպտէին իրեն հոպիտ. ու ան՝ մէկէն իր ընկերներուն կը փարէր, կը համբուրէր զանոնք սրտալիբ, կատաղութենէ սիրազեղութեան անհասանելի փոխանցումով մը:

Իր հրաւիրեալները ա՛լ լոլիկցեր, անճրկեր էին, լիակեր կծկտեր էին իրենց աթոռակներուն վրայ, մինչ Մերկիկ, մշտառոյգ, կը ծանակէր անոնց դասալքութիւնը՝ իրենց «դաս»ը բնորոշող գունաւոր ու պայթուցիկ բաւերով, նոր շիշ մը կ'ապսպրէր իր հրամայագոր ցուցամատին մէկ նշանովը, ու կը շարունակէր ինք միս-մինակ, արհարմարհոտ, յաղթապանձ ու վէս:

Ու Մերկիկի խմեց այսպէս երկար պահ մը...

Քիչ յետոյ սակայն՝ մոլեգնած էր յանկարծ, իրր թէ Սանդարամետին գիււահնար օշինդրէն ըմպած ըլլար անիկա:

Ահագնալուր շառաչիւն մը, ու գինետան խորը, լուսամուտի մը մեծածաւալ սպակին ինկաւ ահա, ցրբիս ցրբիս, բիւր կոտորուքներով: Մերկիկին քովը վազեցին. ի՞նքն էր կոտորող. գինեպանը սուրաց, ճեղքեց լաճախորդներուն խմբումը, ու Մերկիկին դաստակէն բռնած էր արդէն:

Քանի մը երակ միանգամայն կարբուած էին, արիւնը կը ժայթքէր կարմիր ձեռնոցի մը փոխակերպելով գինեպանին ձեռքը, որ կը ճնչէր մեղմիւ վէրքին վրայ, արեան կորուստը արդիւնելու համար:

Գնչուն լուծ էր հիմա ու շիշերը ա՛լ չէին շաչեր:

Մերկիկ, գլուխը պատին կրթնած, կը դիտէր, ծանր ու տարտամ նայուածքով մը, փոխն ի փոխ իր խղրատուած դաստակը ու զինք շրջապատող անձկոտ գլուխները. աղօտ ժպիտով մը հեզնել կը թուէր անոնց վրդովը, սրտարատ

կարծես կրկնելու իր մոլեգին ու խելա-
յեղ հարուածը:

Բայց հարկ էր խնամել ու պատասել
վէրքը շուտով. դեղարան տանիլ ուզե-
ցին Մերկիկը. ան մերժեց վե՛հ արհա-
մարհանքով. պնդեցին. ասլա յուսահատ
զինքն համոզելէ՝ շտապեցին կանչել
անկիւնին դեղագործը որ իրենց միակ
ճանչցած բժիշկն էր, ու բարեկամը:

Քիչ յետոյ ան կուզար արտորան-
քով. ու անոր ետեւէն՝ շուկային բոլոր
դատարկագորաներն ու հետաքը-
քիրներու խառնիճաղանճը, վայր-
կենապէս հոն կուտակուած, գինետունը
խուժեցին հրձուտեքներով ու բիրտ
ձայնարկութիւններով: Ոստիկան մը ե-
կու քննութեան: Ու Մերկիկին բոլոր
ընկերները, ջրհանկիր ու ձկնորս, հայ,
յոյն ու քանի մը քուրդ ալ, գիւղին պոռ-
չտան տայիները, կը հասնէին հետգ-
հեռէ իրարանցումով, ու գուսպ անձ-
կութեամբ «Իրենց Մերկիկին» զիճակը
կը հարցնէին իրարու, որքան ալ քիչով
զգածուող մարդիկ չըլլային ասոնք:

Ժխորը կ'աւելնար տակաւ ու կը
սաստկանար գինետան մէջ: Խոնուած
ամբոխը, Մերկիկին արեան կայլակնե-
րէն ալլասերած, ու ի բնէ հակամէշա յո-
սեզոյնը երեւակայելու, կը խժար, կը
վժվժար դէշ շշուկով մը: Չարաշուք օ-
րերու ստուեր մը կը յածէր, կարծես,
սրահին վրայ գինետունը կը դողար
հիմա եղերական սոսկումի մը մէջ:

Եւ սակայն՝ վրդովայոյց այս մար-
դոց կողքին, ես որ Մերկիկին համար
ամենէն աւելի տագնապեր, բայց շու-
տով հանդարտեր էի, զի դիտած էի դե-
ղագործին ապահովիչ գէմքը, հիմա
այլեւս բոլոր էութեանս խոյանքովը

անձնատուր էի ուժգին ուրախութեան
մը, որ ժայթքեր էր յորդարորբ՝ սրախ
խորերէն:

Այս Մերկիկը, խելա՛ն, արիւնաթա-
թա՛խ նոյն իսկ, իմ երազներուս Մեր-
կիկն էր. սանձակոտոր, ասեղասաս
Մերկիկ մը, պայքարատենչ այն ջոկա-
տէն՝ ուրկէ հերոսները կը ծնին իրենց
ցեղը փրկելու եւ կամ փառքով մը օծե-
լու համար զայն:

Հայ կտրիճը իր մուսլ ճակատա-
գրին դէմ ծառացած ընդոստ՝ իր կու-
փին ամենի հարուածն արձակեր էր,
ջախջախելու համար, կարծես, գեհե-
նի ուժերը որ խափաներ էին արիական
իր կոշումը, ու ապրելու համար պահ մը,
պահիկ մը գոնէ, հսկայի իր խրոխտ
կեանքը, գոր ան, բա՛րէ, քաշկուտեր էր
ցայն վայր, մթին խաւերու մէջ, անփա-
ռունակ ու նսեմ: Ան դէն շարտեր էր,
ահա՛, վե՛րջապէս, ընկոյզի իր փուճ
կողովը. թօթափեր էր իր պողպատէ
գաստակը անոր լուծին ամօթէն, զար-
կեր, զարհուրեր էր, արիւն փնտուեր էր
ու իրե՛նը կուտար այս պահուս ահա,
մահուան իսկ յօժար, միայն թէ մեռնէր
քաջագունի մը պէս, գեղեցիկօրէն, վսեմ
յիմարութեան զայրագին նոսպայի մը
մէջ, մեռնէ՛ր իր վրիժառու հուսկ հար-
ուածին հեշտանքովը գերարբշիռ...

Ու կը թուէր ինծի՝ թէ յիրաւի,
ինչ որ Հայոցին խորտակած էր հոտ՝
այդ գիշեր, աննիւթական բան մըն էր
բոլորովին, - նսե՛հը նուաճեալին, ճրն-
չուածին ու հալածականին. Հայու նը-
սեհը իսկ եւ իսկ:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Կ. Պոլիս 1893